ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 օգոստոսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

111
(2777)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՐԱՐԸ

Հուլիսի 28-ին Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանն ու նրա հայրը՝ նախկին դեսպան Արմեն Սմբատյանը, կալանավորվեցին: Երեկ էլ կալանավորվեց գործարար Արման Պետրոսյանը: Նրանք կասկածվում են պետությանը 966 մլն դրամի գույքային վնաս պատճառելու մեջ, թեեւ փաստաբանը նշել էր 166 մլն կեղծ հիմքերով քրգործի մասին:

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ գործարար Արման Պետրոսյանը կապի եւ տրանսպորտի նախկին նախարար Էդուարդ Մադաթյանի՝ Խուճուճ Էդոյի (հայտնի կառուցապատող) փեսան է:

Էդուարդ Մադաթյանին եւ նրա փեսային է փաստացի պատկանում Երեւան քաղաքի կենտրոնում՝ Պուշկինի 25 հասցեում վեր խոյացած բարձրահարկը, որը, բնակելի շենք լինելուց բացի, իր ներսում նաեւ ունի ռեստորանային համալիր, սրճարան եւ այլն: Գործարար Պետրոսյանն էլ բնակվում է հենց Պուշկինի այդ շենքի վերջին հարկում: Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սմբատյանը, նրա որդի, դիրիժոր Սերգեյ Սմբատյանը եւ գործարար Արման Պետրոսյանը 2012 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացրել են 800 մլն դրամ արժողության «Գրքի աշխարհ» բազմաֆունկցիոնալ համալիր կառուցելու կեղծ ներդրումային ծրագիր եւ խարդախությամբ հափշտակել «Երեւանի Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված, Երեւանի Կողբացի 36 հասցեում գտնվող հողամասից առանձնացված 300 քմ մակերեսով, 166 մլն 103 հազար դրամ արժողությամբ հողամասը:

Նշենք, որ Արման Պետրոսյանի եղբայրը «օրենքով գող» Պզոյի՝ Արմեն Ղազարյանի փեսան է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը թեեւ ցանկանում է առավել ակտիվ գործունեությամբ զբաղվել, բայց չի ստացվում: Մեր տեղեկություններով՝ իր ցանկությունների մասին նա պարբերաբար բարձրաձայնել է իր հանդիպումների ժամանակ, նեղսրտել հաճախ իր հասցեին հնչող քննադատությունների համար, որ չի խառնվում ներքաղաքական հարցերին: Միեւնույն ժամանակ, նա իր աշխատակիցներին բացատրել է, որ չի կարողանա ակտիվանալ որպես ՀՀ նախագահ, քանի որ փոքր լիազորություններ ունի, եւ ցանկության դեպքում էլ բան չի կարող անել: Ամեն դեպքում, քանի որ իր շրջապատում եղել են կարծիքներ, տեսակետներ, թե նա մարդկանց աչքից ընկել է նախագահ դառնալուց հետո, քանի որ այլեւս ոչինչ չի անում, որոշել է ակտիվանալ եւ փորձել վերականգնել իր դրական իմիջը: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս տեղեկությունները ճշտել Հանրապետության նախագահի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի վարչությունից, որտեղից մեզ հայտնեցին. «Հանրապետության նախագահն իր գործունեության մեջ առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ ամբողջ ծավալով իրականացնում է իր սահմանադրական լիազորությունները»:

Այսօր կալանավորված ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը կգնա 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորները «զենք-զրահով» պատրաստված սպասում են Տոնոյանին դիմավորելուն: Այսպիսով, մինչ ԱԺ քննիչ հանձնաժողովի այսօրվա նիստը ՔՊ-ականները մի քանի անգամ հավաքվել, նիստեր են արել ու անհրաժեշտ ցուցումներ ստացել: Ինչպես մեր ՔՊ-ական աղբյուրներն են փոխանցում, հրահանգներն իջեցվել են անմիջապես Նիկոլ Փաշինյանի կողմից. կարելի է ասել՝ հարցերը գրել, տվել են ՔՊ-ականներին, նրանց մնում է միայն կոշտ ու սուր տոնով դրանք ուղղել ՊՆ նախկին նախարարին: ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանն էլ իր հերթին լավ նախապատրաստել է ՔՊ-ականներին, ասել է, որ հարցախեղդ անեն Դավիթ Տոնոյանին, կոշտ հարցեր ուղղեն նրան: Տեղեկացանք նաեւ, որ նիստի սկզբնամասը բաց է լինելու, իսկ մի մասն էլ՝ փակ, գաղտնի ռեժիմով:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ դատարանը ազատ է արձակել արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու դեպքով կալանավորված անձանցից մեկին. ո՞վ է նա: Ինչպես հայտնի է, ամիսներ առաջ ԱԱԾ-ն կալանավորել էր Արա Բադոյանին, եւ մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նա 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի եւ, դրանով պայմանավորված, նույն օրը ՀՀ-ում եւ Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության պայմաններում 2020 թվականի նոյեմբերի 10-ին՝ պատերազմը դադարեցնելու եւ Արցախի Հանրապետության վերահսկողության ներքո գտնվող մի շարք տարածքներ Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ ձեռք բերված համաձայնության վերաբերյալ հայտարարությունը զանգվածային լրատվամիջոցներում հրապարակվելու հետո, համացանցի միջոցով տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության շենքի մոտ ամբոխ է հավաքել, եւ կատարվում են զանգվածային անկարգություններ, գնացել է նշված վայր եւ միացել զանգվածային անկարգությունների մասնակիցներին, հարվածներ հասցրել արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանին: Բադոյանը չէր ընդունում մեղադրանքը եւ իրավապահներին հայտնել էր, որ այնտեղ գտնվել է, բայց չի հարվածել Արարատ Միրզոյանին: Եվ, ահա, այս գործը ուղարկվել էր դատարան. դատարանը 1 միլիոն դրամ գրավի դիմաց ազատ է արձակել ԱԳ նախարարին ծեծած անձին:

ԶՐՈՒՅՑ

ԴԱՎԻԹ ԲԱԲԱՅԱՆԸ՝ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հուլիսի 29-ին ԿՄԽԿ ուղեկցությամբ, նախօրոք ադրբեջանական կողմի հետ ձեռք բերված համաձայնությամբ՝ Արցախից Հայաստան բուժառուներին տեղափոխող շարասյունը հասել է Հակարիի կամրջի մոտ տեղակայված ադրբեջանական անօրինական «անցակետ»: Անձնագրերը ստուգելու ընթացքում Արցախի Հանրապետության Պասարա համայնքի բնակիչ, 1955թ. ծնված Վազգիֆ Խաչատրյանն իր անձնագիրը ներկայացրել է ադրբեջանական սահմանապահ ծառայության ներկայացուցիչներին, որոնք այնուհետեւ անձնագիրը չեն վերադարձրել նրան: Վազգիֆ Խաչատրյանի դստեր եւ ԿԽՄԿ-ի ներկայացուցչի հարցին, թե ինչու չեն վերադարձնում անձնագիրը, ադրբեջանցիները դատապարտել են, որ 5 րոպեից կտրամադրեն: Այդ ընթացքում Վազգիֆ Խաչատրյանին ուղեկցել են ադրբեջանական անօրինական «անցակետում» տեղակայված բժշկական սենյակ, որտեղ նրան հարցեր են ուղղել՝ առողջության հետ կապված, հետաքրքրվել ՀՀ տեղափոխվելու առողջական դատճառներից:

Այնուհետեւ տեղեկացրել են, որ պետք է 15 րոպեով ուղեկցեն «անցակետի» մոտակայքում տեղակայված սենյակներից մեկը մի քանի հարց ուղղելու համար: Վազգիֆի դուստրը եւ ԿԽՄԿ ներկայացուցիչը պնդել են, որ հարցերը կարող են ուղղել հենց անցակետում, այլ տեղ տեղափոխվելու անհրաժեշտություն չկա: Դրանից հետո ադրբեջանցիները սպառնացել են, որ դա կանեն ուժի կիրառմամբ: Այդ նույն ժամանակ, ըստ վկայությունների, «անցակետի» մոտ ինքնաձիգերով զինված բազմաթիվ ադրբեջանցի ծառայողներ են հավաքվել: Խաչատրյանին եւ ԿԽՄԿ Ստեփանակերտի գրասենյակի օտարազգի ներկայացուցչին նստեցրել են «Նիվա» մակնիշի մեքենա, որը ուղեւորվել է դեպի կամրջի ներքեւի հատված: Մոտ 10 րոպե անց «Շեվրոլե» մակնիշի մեքենայով ԿԽՄԿ ներկայացուցիչը վերադարձել է «անցակետ», իսկ Վազգիֆ Խաչատրյանը տարվել է անհայտ ուղղությամբ: Ըստ վկայության՝ ԿԽՄԿ ներկայացուցչին ադրբեջանցիները հրելով դուրս են հանել մեքենայից:

Դեպքի առնչությամբ, ինչպես նաեւ Արցախում առկա իրավիճակի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Արցախի Հանրապետության նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանի հետ:

-Պարոն Բաբայան, Ադրբեջանի վերջին գործողության՝ քաղաքացուն բռնի կերպով տանելու եւ հանցավոր խումբ ստեղծելու եւ 1991թ. դեկտեմբերի 21-ին Խոջալուի շրջանի Մեշալի գյուղի բնակիչների դեմ հանցագործություններին մասնակցելու համար մեղադրելու հետ կապված՝ ի՞նչ վիճակ է այժմ:

-Իրավիճակն անփոփոխ է, այնպիսին է, ինչպես ամեն օր նկարագրում ենք, ու գնալով ամեն բան ավելի է վատթարանում: Իհարկե, այն, ինչ կատարվել է, պետական ահաբեկչություն է միանշանակ: Կարող եմ ասել, որ հայատյացության ամենավատ դրսեւորումներից մեկն է: Իրեն այցելել են Կարմիր խաչի ներկայացուցիչները, եւ թե ինչ վիճակում պետք է որ լինի այդ մարդը այնտեղ, կարծում եմ՝ բոլորս էլ շատ լավ գիտակցում ու հասկանում ենք: Շատ լավ ենք տեսնում, թե ինչ է կատարվում, երբ ինչ-որ շինծու գործ են բերել, այդ մարդու գլխին կապել, իբրեւ թե ինչ-որ մեկն է 90-ականներից հայտնվել եւ մեղադրում է իրեն: Սուտ է, գռեհիկ ու զզվելի թատրոն է պարզապես: Միջազգային հանրությունն էլ պապանձված է: Փոխարեն ինչ-որ քայլերով Ադրբեջանին սաստեն, ինչ-որ պատժամիջոցներ կիրառեն նրա դեմ եւ այլն, պարզապես լռում են:

-Իսկ հանրահավաքները ի՞նչ փուլում են, պարոն Բաբայան:

-Ես կարծում եմ, որ այդ ամենը պետք է լինի բացառապես պետական վերահսկողության ներքո: Ես անթույլատրելի եմ համարում ցանկացած քայլ, որը կարող է իրավիճակը բարդացնել: Միայն պետությունը կարող է եւ պետք է լինի նախաձեռնողը այդ ամենի:

-Պարոն Բաբայան, բեռները այդպես էլ տեղ չհասան: Դեսպանները, իրենց առաքելությունը ավարտված համարելով, լքեցի՞ն տարածքը:

-Իհարկե, այդպես է: Դրանով իրենք փաստացի ցույց են տվել, որ ցանկացած նման նախաձեռնություն կարող են տապալել: Ինչու՞. քանի որ միշտ իրենց նման լկտի պահվածքը հանդուրժել ենք, եւ իրենք էլ, իրենց նավթի, գազի առկայության հիման վրա, ինչ ուզում, անում են, եւ Արեւմուտքն էլ փակում է աչքերը, խաղաղապահները ի վիճակի չեն, աշխարհն էլ լռում է: Այս ամենը պարզապես խայտառակություն է:

Զրուցեց ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԸ

ԿԱՐԵՎՈՐ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Նիկոլ Փաշինյանին անցանկալի, գուցե նվաստացնող հարցեր տալու համար լրագրողների նկատմամբ իրականացվող արշավը, անձնական վիրավորանքներն ու թիրախավորումն անթույլատրելի են:

Լրագրողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք միջազգային կազմակերպությունների ահազանգել եմ խնդրի մասին:

Նախկին լրագրող Նիկոլ Փաշինյանն ինքն էլ պաշտոնյաներին անհարմար դրության մեջ դնող եւ նվաստացնող հարցեր է տվել նախկինում եւ պարտավոր էր պատրաստ լինել նրան, որ հատկապես հայրենիք հանձնելու իր շարունակական գործողություններից հետո իրեն կտրվեն միայն անցանկալի հարցեր»:

ԿՐՔԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԱՐՏՎՈՒՄ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գեւորգ Պապոյանի հեղինակած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի շուրջ կրքերը չեն հանդարտվում: Հիշեցնենք, որ նախագծով առաջարկում է հետեւյալը. բանկը, որից քաղաքացին առաջնային շուկայից հիպոթեքային վարկով բնակարան է գնում, բնակարանի գնման իրավունքի համար վճարած գումարն ամբողջությամբ չտրամադրի կառուցապատողին, դրա 25 տոկոսը փոխանցի, մնացած 75-ը վճարի, երբ բնակարանը կառուցվի եւ հանձնվի սեփականատիրոջը:

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար դժգոհություններ էր ստանում կառուցապատմամբ զբաղվող ընկերություններից, որոնք պնդում են, որ այս նախագիծը մեծ վնաս է հասցնելու կառուցապատման ոլորտին. կառուցապատողները նշում են, որ եթե գումար չստանան, չեն կարողանա աշխատանքը կատարել, նրանք մտադիր են մինչեւ անգամ բողոքի ակցիա կազմակերպել՝ ընդդեմ պատգամավորի հեղինակած նախագծի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բարձրացած մեծ աղմուկից հետո Գեւորգ Պապոյանը հետ է կանչել իր նախագիծը: Տեղեկությունը ճշտելու համար կապ հաստատեցինք պատգամավորի հետ: Վերջինս նշեց, որ նախագիծը հետ չի կանչել եւ նման մտադրություն էլ չունի:

«Նախագիծը հետ չեն կանչել, շուտով նաեւ կիրապարակեմ՝ ինչ տեսքով եմ ԱԺ-ին առաջարկելու, որ երկրորդ ընթերցմամբ ընդունի նախագիծը: Նախագծում որոշ փոփոխություններ լինելու են, բայց նախագիծը հանելու մտադրություն չունեմ, անգամ նման քննարկում չի եղել»,-ասաց նա:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԲԱՐՁՐԱՉԱՅՆՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԸ

Դատավորները պատրաստվում են բոյկոտի, իսկ թե բոյկոտը ինչ կերպ կդրսեւորվի, դատավորները դեռ թեժ քննարկում են: Բանն այն է, որ հուլիսի 19-ին դատավորների ընդհանուր ժողովի օրակարգը չհաստատվեց, նիստը հետաձգվեց: Հաջորդ ժողովը նշանակվել է օգոստոսի 4-ին: Իսկ ինչո՞ւ էր նիստը հետաձգվել: Բանն այն է, որ դատավորներն ընդհանուր ժողով էին հրավիրել՝ ընտրելու Բարձրագույն դատական խորհրդի անդամ դատավորի: ԲԴԽ-ում դատավոր անդամի թափուր հաստիք էր առաջացել այն բանից հետո, երբ դատավոր Մեսրոպ Մակյանը հրաժարականի դիմում էր ներկայացրել: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի կայքում առկա տեղեկության համաձայն՝ ԲԴԽ դատավոր անդամի թեկնածուներն են Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Էդգար Հովհաննիսյանը, Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սուրեն Մնոյանը եւ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարդուհի Հովնանյանը: ԲԴԽ անդամի ընտրության համար ծանուցագրեր են ստացել միայն մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավորները, թեեւ ԲԴԽ անդամ ընտրվելու չափանիշին համապատասխանում են նաեւ այլ դատավորներ: Եւ, ահա, այս հանգամանքն էլ դատավորները բարձրաձայնեցին, ու օրակարգը չհաստատվեց, նիստը հետաձգվեց: Տպավորություն էր, որ այս ամենից հետո ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը պետք է կազմակերպեր պատշաճ ծանուցում բոլոր այն դատարաններին ու դատավորներին, որոնք համապատասխանում են ԲԴԽ անդամ դառնալու չափանիշներին, սակայն իրավիճակը չի փոխվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը չի հանձնվում ու ծանուցել է միայն մարզերի դատավորներին: Արդյունքում դատավորները որոշել են բոյկոտել, իսկ թե ինչ կանեն, կհետեւենք զարգացումներին: Հիշեցնենք, որ դատավորների ընդհանուր ժողովի ժամանակ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Մխիթար Պապոյանը դատավորների մոտ բարձրացրել է ԲԴԽ դատավոր անդամների հետ կանչելու հարցը եւ առաջարկել այն ընդգրկել ժողովի օրակարգում: Դատավորների ընդհանուր ժողովում ներկա 187 դատավորներից 180-ը կողմ է քվեարկել Մխիթար Պապոյանի առաջարկին, սակայն անգամ այս հարցը Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադեւոսյանի թեթեւ ձեռքով օրակարգ չէր մտել, ուստի կռիվը դատական համակարգում առջեւում է:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հարցազրույց է տվել Euronews հեռուստաընկերությանը: Այդ մասին հայտնում է վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը: Նա տեղեկացրել է, որ Նիկոլ Փաշինյանը խոսել է հումանիտար ճգնաժամի, գերիների ու պահվող անձանց վերադարձի, ինչպես նաեւ միջազգային մեխանիզմի ներքո Ստեփանակերտ-Բաքու երկխոսության անհրաժեշտության մասին:

«Հարցազրույցում վարչապետն անդրադարձել է Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակմանը՝ նշելով, որ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 6-րդ կետով ամրագրված ռեժիմը պետք է վերականգնվի: Հիշեցնելով ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի 2023թ. փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի որոշումների մասին՝ վարչապետը կրկին արձանագրել է, որ միջազգային բարձրագույն դատական ատյանի՝ իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումներն Ադրբեջանի կողմից մինչ օրս չեն կատարվել»,- գրել է Նազելի Բաղդասարյանը:

ՆԱՄԱԿ՝ ԿԽՄԿ-Ի՝Ն

ԱԺ «Հայաստան» խմբակցությունն ադրբեջանցիների կողմից արցախցի Վագիֆ Խաչատրյանի առեւանգման փաստի առթիվ նամակ է հղել Կարմիր խաչի միջազգային կոմիտեին, ինչպես նաեւ ՀՀ ԱԺ միջխորհրդարանական հանձնաժողովներին եւ միջազգային խորհրդարանական կազմակերպություններին: Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են խմբակցությունից:

Խմբակցության անունից ուղղված նամակում, դատապարտելով միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումը եւ մարդկության հիմնարար սկզբունքների բացահայտ անտեսումը, նշվում է, որ նման արարքը ոչ միայն ոտնահարում է անմեղ մարդու իրավունքներն ու արժանապատվությունը, այլեւ խաթարում է Միջազգային Կարմիր խաչի կողմից մարդասիրական գործողություններին օժանդակելու գործում ներդրված ջանքերը:

Ակնհայտ է, որ այս արարքն ուղղված է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության շրջանում հուսահատություն տարածմանը, այլեւ Կարմիր խաչի համբավն արատավորելուն եւ կարեւոր մարդասիրական առաքելության իրականացման խոչընդոտմանը:

Խմբակցությունը կոչ է անում Կարմիր խաչի միջազգային կոմիտեին անհապաղ եւ վճռական քայլեր ձեռնարկել՝ ապահովելու Վագիֆ Խաչատրյանի անվտանգ եւ արագ վերադարձն իր ընտանիք եւ պատասխանատվության ենթարկել նրա առեւանգման պատասխանատուներին՝ համաձայն միջազգային իրավունքի:

«Հայաստան» խմբակցությունը նաեւ հորդորում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեին բազմապատկել իր ջանքերը՝ կանխելու Լեռնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակի հետագա վատթարացումը եւ տարածաշրջանում մարդասիրական իրավունքի ոտնահարման դեպքերը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Արցախից Հայաստան տեղափոխվող բուժառուներից մեկին՝ 68-ամյա Վագիֆ Խաչատրյանին, որը մեկնում էր Հայաստան վիրահատման, հուլիսի 29-ին առեւանգել են Ադրբեջանի սահմանապահ ծառայության ներկայացուցիչները: Ադրբեջանի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ նա ձերբակալվել է: Վագիֆ Խաչատրյանը, ըստ մեղադրանքի, իբր, հանցավոր խումբ է ստեղծել, որը 1991թ. դեկտեմբերի 21-ին մասնակցել է Խոջալուի շրջանի Մեշալի գյուղի բնակիչների դեմ հանցագործություններին:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ

«ԲԱՑՈՒՄ»-Ը՝ ՄԱԿ-Ի ԴԻՄԱՑ

«Բացում» նախաձեռնությունը ակնկալում է, որ ՄԱԿ գրությամբ ավտոմեքենաները Ադրբեջանի կողմից շրջափակված Լեռնային Ղարաբաղ կհասցնեն իրենց հավաքած հումանիտար բեռը՝ դարեկը: ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակի դիմաց հրավիրված ասուլիսում այս մասին ասացին նախաձեռնության անդամները:

«Բացում» նախաձեռնության մասնակիցները տարբեր քաղաքական հայացքներով մարդիկ են, որոնք կարողացել են համատեղ 3 նպատակ մշակել:

«Առաջինն է բացել Բերձորի (Լաչինի) միջանցքը, երկրորդը՝ ապահովել անվտանգություն, այդ միջանցքի անարգել ու անժամկետ օգտագործում, որով Հայաստանի եւ Արցախի միջեւ բեռնափոխադրում կլինի: Երրորդը՝դուրս ենք եկել պայքարի Արցախի մեր հայրենակիցների իրավունքների համար, որոնք հայտնվել են հումանիտար աղետի շեմին: Այստեղ հավաքվելով՝ մենք ամենօրյա ռեժիմով ցույց ենք տալիս, որ 24 ժամ շարունակ կանգնած ենք Արցախի կողքին»,-ասաց «Բացում» նախաձեռնության անդամ Նարեկ Այվազյանը:

Նա հայտնեց՝ նախաձեռնությունը հումանիտար բեռներ է հավաքել, որոնք փոխանցելու են ՄԱԿ-ին՝ ակնկալիքով, որ Լաչինի միջանցքով դրանք տեղափոխվեն Արցախ: Սկսել են հավաքել հուլիսի 19-ից, արդեն տասնյակ տոննա հումանիտար բեռ են հավաքել: Նարեկ Այվազյանը վստահեցրեց՝ ՄԱԿ-ի գրասենյակն ամեն օր հարցնում է իրենց հավաքած հումանիտար բեռների մասին, ուշիուշով հետեւում են ու տեղեկատվությունը փոխանցում ՄԱԿ-ի գլխամաս:

Նախաձեռնության մասնակիցները հուլիսի 31-ին՝ ժամը 11:00-12:00-ն, փակելով ՄԱԿ-ի գրասենյակի մուտքը, իրենց բողոքի ձայնն են բարձրացրել, որ իրենց խոսքը հասնի ՄԱԿ-ի կենտրոնակայան:

«Այս ապատիկ ու դժգույն իրավիճակում մեր մեջ հույս կա, որ իրավիճակի վրա կարող են ազդել ավելի ազդեցիկ կառույցները, ինչպիսին ՄԱԿ-ն է»,-ասաց Այվազյանը:

Նախաձեռնության անդամներից մյուսն էլ շեշտեց՝ ՄԱԿ-ը առաջնային մանդատ ունեցող միջազգային կազմակերպություն է, որն ամենաշատ անդամ պետություններն ունի: Ունի բազմաթիվ հռչակագրեր, կոնվենցիաներ, որոնք աշխարհի յուրաքանչյուր կետում երաշխավորում են մարդու կյանքի իրավունքը, առողջ ու արժանապատիվ ապրելու, ազատ տեղաշարժվելու իրավունքը: ՄԱԿ-ն ունի նաեւ պարենի համաշխարհային ծրագիր, որով տասնյակ տարիների ընթացքում աշխարհի ամենաթեժ կետերում պարեն են հասցրել: Բացի այդ, ունի Հաագայի միջազգային դատարանը, որը որոշում է կայացրել, որ Լաչինի միջանցքը պետք է բացվի:

«Մեր քաղաքացիական ճնշման ամբողջ նպատակն այն է, որ, բացի տեղյակ լինելուց, պետք է նաեւ գործել: Տեղյակ լինելը դեռ բավարար պայման չէ, իսկ գործելու համար պետք է ճնշում լինի, թեկուզ ստիպողաբար, որ մեխանիզմներն աշխատեն: Սա մեր կողմից միայն պարենի հավաքագրում չէ, այս շարժմամբ փորձում ենք միջազգային մեխանիզմներն աշխատեցնելու օրակարգ ձեւավորել եւ հստակ հասկացնել, որ եթե ունեք սպիտակ թղթի վրա սեւով գրված հռչակագրեր կամ նպատակներ՝ մարդու իրավունքների մասով, եւ դրանք չեն իրականացվում, ապա մենք՝ Հայաստանի քաղաքացիներս, լեգիտիմ իրավունք ենք ստանում, որ ձեզ հուշենք, ճնշում գործադրենք, որ այդ թղթի վրա գրված նպատակները, հռչակագրերը կյանքի կոչվեն»,-ասաց անդամներից մեկը:

Այսպիսով, ըստ նախաձեռնության անդամների՝ սա միջազգային կազմակերպությունների մեխանիզմներն աշխատեցնելու օրակարգ գեներացնելու շարժում է: Նրանք համարում են, որ եթե գեթ մեկ անգամ հումանիտար բեռով բարձված ավտոմեքենա (որի վրա գրված կլինի ՄԱԿ) մտնի Արցախ Լաչինի միջանցքով, ապա դա կդառնա նախադեպ, ու միջանցքն արդեն կգործարկվի:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ԱՎՏՈԲՈՒՄՆԵՐ

Օգոստոսի 1-ից Երեւանում կգործարկվի ավտոբուսային երթուղիների հերթական խմբաքանակը:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում «Գազել» մակնիշի հին միկրոավտոբուսները փոխարինվում են նոր ավտոբուսներով:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Երեւանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչությունը կմեկնարկի օգոստոսի 23-ից եւ կտեւի մինչեւ սեպտեմբերի 15-ը՝ ժամը 24:00-ն: ԿԸՀ-ն հրապարակել է գործընթացի ժամանակացույցը:

Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները գրանցման համար ԿԸՀ անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացնեն օգոստոսի 3-ից մինչեւ օգոստոսի 13-ը: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը տեղի է ունենալու օգոստոսի 13-ից օգոստոսի 18-ը: Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուները, ինչպես նաեւ կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներում ընդգրկված կուսակցություններն իրենց գույքի եւ եկամուտների հայտարարագրերը ԿԸՀ են ներկայացնելու մինչեւ օգոստոսի 23-ը:

Երեւանի ավագանու ընտրությունները կկայանան սեպտեմբերի 17-ին:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ

Արցախի Հանրապետության ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը հրաժարական է տվել:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են Արցախի ազգային ժողովից:

«Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ տալիս եմ հրաժարական Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնից»,- հայտարարել է Թովմասյանը:

Հրաժարականի մտադրության մասին Թովմասյանը հայտնել էր դեռ հուլիսի 28-ին: Նույն օրը Արթուր Թովմասյանը Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին էր ներկայացրել պաշտոնից իր հրաժարականի պատճառները:

ՄԻՋԱՆՑՔԸ ՀԱՄԱՐԵՑ ԱԴՐԲԵՋԱՆԻՆԸ

Թուրքիան կողմ է, որպեսզի շտապ խաղաղության համաձայնագիր կնքվի Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ:

«Այստեղ կարծում են, որ դա թույլ կտա կայունություն ապահովել իրենց շրջապատող տարածաշրջանում»,- տեղեկացրել է Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը Անկարայում ադրբեջանցի գործընկերոջ՝ Ջեյհուն Բայրամովի հետ բանակցություններից հետո: Հեռարձակումը վարել է TRT հեռուստալիքը:

Նա Լաչինի միջանցքն անվանել է Ադրբեջանի տարածք՝ նշելով, որ Բաքվում իրավունք ունեն ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք այնտեղ անհրաժեշտ են համարում՝ ապահովելու համար իրենց անվտանգությունն ու ինքնիշխան իրավունքների պաշտպանությունը:

ԹՄՐԱՆՅՈՒԹ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆ ՈՒ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ՈՐԴԻՆԵՐԸ

ԱԺ նախկին պատգամավոր, ոստիկանության նախկին բարձրաստիճան պաշտոնյա Նվեր Չախոյանի որդիները հերթական անգամ թմրանյութի պատմության կիզակետում են: Երեկ shamshyan.com-ը գրել էր, որ ՊԾ Կոտայքի մարզի գումարտակի հրամանատար Արտյոմ Սահակյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Լեւոն Բաղալյանի, գումարտակի ծառայության տեսուչ Կառլեն Բաղյանի եւ նույն գումարտակի 1-ին վաշտի հրամանատար Վահագն Կարապետյանի գլխավորությամբ՝ իրականացվում է «Ոսկե երիտասարդները չպետք է մարեն թմրամիջոցները» օպերացիան:

ՊԾ Կոտայքի մարզի գումարտակի 1-ին վաշտի 1-ին եւ 2-րդ դասակների պարեկները մի քանի ուղղություններում դարանակալումներ են կատարում եւ արդեն Երեւան-Սեւան ավտոճանապարհի 48 կմ հատվածում ժամը 16:00-ի սահմաններում կանգնեցնում են BMW X5 մակնիշի ավտոմեքենան, որի վարորդը՝ Երեւանի բնակիչ 30-ամյա Նորիկ Մեյրոյանը, պարեկներին հայտնում է, որ իր ավտոմեքենայի մեջ թմրամիջոց կա, եւ այն իր անձնական օգտագործման համար է:

Պարեկները նրան եւ նրա հետ եղած 2 ուղեւորներին, թմրանյութ պահելու, օգտագործելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, ձերբակալում եւ տեղափոխում են Ոստիկանության Հրազդանի բաժին: Տեղում պարզվում է նաեւ, որ ուղեւորներն են Երեւանի բնակիչներ 28-ամյա Արեգ Չախոյանը եւ 30-ամյա Ռոբերտ Գալստյանը:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վերջիններս ենթարկվում են անձնական խուզարկության, որի արդյունքում Ա. Չախոյանի մոտ հայտնաբերվում է անձեռոցիկի մեջ փաթեթավորված թվով 6 հատ առանց գրառման դեղահաբեր, ինչպես նաեւ թվով 10 հատ «Вука Вука» գրառման եւ 1 հատ «Tamacopm» գրառմամբ դեղահաբ, իսկ Մեյրոյանը հայտարարել է, որ ավտոմեքենայում առկա պայուսակի մեջ ունի կանեփանման զանգված, որը նախատեսված է իր անձնական օգտագործման համար՝ որպես թմրամիջոց:

Դեպքի փաստով Ոստիկանության Հրազդանի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք Ն. Մեյրոյանի, Ա. Չախոյանի եւ Ռ. Գալստյանի հետ ներկայացվել են Հայաստանի Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչություն, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քր. օր.-ի 396 հոդվածի 1 մասի հատկանիշներով: Ն. Մեյրոյանը, քննիչի որոշմամբ, ձերբակալվել է, Ա. Չախոյանն ու Ռ. Գալստյանը բաց են թողնվել:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ Ա. Չախոյանը ԱԺ նախկին պատգամավոր, քրեական պատմություններով հայտնի Նվեր Չախոյանի որդին է:

Նկատենք, որ նախկին պատգամավորի որդին առաջին անգամ չէ, որ հայտնվում է իրավապահների տեսադաշտում. դեռեւս 2013 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մարտի 15-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի աշխատակիցները թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով ոստիկանություն են բերման ենթարկել 2 երիտասարդի:

Ժամը 22:30-ի սահմաններում Թումանյան փողոցի 2-րդ անցուղի թիվ 5 շենքի մոտ քրեական հետախուզության աշխատակիցները կասկածանքով զննել են «Մերսեդես Բենս 450» մակնիշի, 008 ՈՈ 02 համարանիշի ավտոմեքենան: Ավտոմեքենայում հայտնաբերվել է պոլիէթիլենային փաթեթ՝ 06 գրամ դեղնականաչավուն զանգվածքով, եւ մեկ կաթուցիչ:

Նշված ավտոմեքենայում է եղել Ազգային ժողովի նախկին պատգամավոր, ոստիկանության նախկին բարձրաստիճան պաշտոնյա Նվեր Չախոյանի տղան՝ 22-ամյա Նարեկ Չախոյանը, եւ Երեւան քաղաքի ավագանու անդամ, Ճըվճըվ Արո մականվամբ Արա Վարդանյանի տղան՝ 21-ամյա Սարգիս Վարդանյանը:

Ք.Մ.

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԿՐԱԿՈՑՆԵՐՆ ՈՒ ԱԱԾ ՔՆՆԻՉԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ դատարանը կալանավորել է ԱԱԾ քննիչ Սերգեյ Անտոնյանի տան ուղղությամբ կրակոցներ արձակած ՌԴ քաղաքացուն:

«Ժողովուրդ» օրաթերթին մանրամասներ են հայտնի դարձել հուլիսի 22-ին Երեւանում հնչած կրակոցներից: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ վերոնշյալ օրը Քաջազնունի փողոցի 5-րդ շենքի բակում կրակոցներ են հնչել, եւ իրավապահները կրակված պարկուճն ու գնդակը հայտնաբերել են ԱԱԾ քննիչ Սերգեյ Անտոնյանի բնակարանում: Ի դեպ, մեզ հասած լուրերի համաձայն՝ հենց ԱԱԾ քննիչ Անտոնյանն էլ իրավապահներին ահազանգել է ու հայտնել է կատարվածի մասին: Այս իրավիճակում հարց է առաջանում՝ կոնկրետ կրակոցներն ուղղված են եղել ԱԱԾ քննիչի դեմ, թե կատարվածը պատահականություն է, կամ միգուցե կոնկրետ մարդիկ քննիչին բան են ցանկացել հասկացնել. հուսանք՝ այս հարցերի պատասխանը կտա տարվող քննությունը:

Նշենք, որ Shamshyan.com-ը գրել էր,որ հուլիսի 22-ին Ոստիկանության կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ այդ օրը՝ 08:50-ի սահմաններում, անհայտ անձը դեռեւս չպարզված ատրճանակից կրակոց է արձակել Քաջազնունի փողոցի շենքերից մեկի բակում, որի հետեւանքով վնասվել է այդ շենքի բնակարաններից մեկի հյուրասենյակի առաստաղը:

Գ. Շամշյանը տեղեկություններով՝ նշված հասցե են ժամանել Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության, Ոստիկանության կենտրոնական բաժնի օպերատիվ խմբերը:

Ժամանել են նաեւ Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության 3-րդ քննչական բաժնի խումբը՝ բաժնի պետ Կիրակոսյանի եւ ավագ քննիչ Ժամկոչյանի գլխավորությամբ:

Ոստիկաններն ու քննիչները նշված բնակարանում հայտնաբերել են կրակված պարկուճ եւ գնդակ: Նույն օրը դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մի քանի օր շարունակ ոստիկանները, իրականացնելով հսկայածավալ օպերատիվ հետախուզական միջոցառումներ, դուրս են գալիս ճիշտ հետքի վրա, եւ քիչ առաջ Երեւանում հայտնաբերվում է Mercedes G մակնիշի 33 GG 300 համարանիշի ավտոմեքենան, ու ապօրինի զենք-զինամթերք պահելու, օգտագործելու եւ խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածանքով, «յաշիկով» հանդերձ, ոստիկանության Կենտրոնական բաժին են տեղափոխում 2 հոգու:

Ավտոմեքենան տեղափոխվում է Ոստիկանության կենտրոնական բաժնի պահպանվող հատուկ տարածք, իսկ բերման ենթարկվածներից մեկի մոտ հայտնաբերվում է «Մակարով» տեսակի մարտական ատրճանակ:

Բերման ենթարկվածները, ատրճանակով հանդերձ, ներկայացվում են Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների 3-րդ քննչական բաժին:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ կրակոց արձակողը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի 20-ամյա Միխայիլ Մ.-ն է, իսկ ավտոմեքենան պատկանում է Երեւանի բնակիչ 25-ամյա Տ.Մ.-ին: Արդյոք վերջինս կրակոց արձակելու պահին եղել է ավտոմեքենայում թե ոչ՝ պարզվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԿՆԵՐԿԱՅԱՆԱ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Օգոստոսի 1-ին՝ ժամը 11:00-ին, ԱԺ-ում տեղի կունենա 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի նիստը:

Հիշեցնենք, որ հանձնաժողովի նիստին մասնակցելու է նաեւ կալանավորված նախկին պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը: ՊՆ նախկին նախարարը գալու է հենց հանձնաժողով, նրան քրեակատարողական հիմնարկից ուղեկցելու են Ազգային ժողով:

Հանձնաժողովի նիստը շարունակվելու է նաեւ օգոստոսի 2-ին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարությունը միջազգային բարդություններ հրահրելու, ԱՀ ներքին վիճակն ապակայունացնելու նպատակով խախտել է 2020 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության նախագահների միջեւ կնքված եռակողմ հայտարարության 6-րդ կետի պահանջները, ըստ որի՝ Ադրբեջանը երաշխավորում է երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների եւ ապրանքների երթեւեկության անվտանգությունը Լաչինի միջանցքով: Այս մասին հաղորդագրություն է տարածել ԱՀ դատախազությունը:

«Այնուհետեւ, անտեսելով եւ չկատարելով ՄԱԿ-ի Հաագայի Արդարադատության միջազգային դատարանի ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում 2023 թվականի փետրվարի 22-ի որոշումը՝ Լաչինի միջանցքի ապաշրջափակման վերաբերյալ, որը վերահաստատվել է նույն դատարանի 06.07.2023թ. որոշմամբ, 2023 թ. հունիսի 15-ից ամբողջովին արգելափակել է Լաչինի միջանցքը՝ թույլ չտալով կենսական ապրանքների, դեղորայքի, սննդամթերքի եւ այլ անհրաժեշտ ապրանքների, այդ թվում՝ 2023 թ. հուլիսի 27-ին ՀՀ-ից ուղարկված շուրջ 400 տոննա մարդասիրական բեռների մուտքը Արցախի Հանրապետություն, այդկերպ Արցախի Հանրապետության տարածքում կազմակերպել եւ իրականացրել է այլ գործողություններ, որոնք ուղղված են Արցախի Հանրապետության հայ բնակչությանը ոչնչացնելուն, որն էլ առաջացրել է Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքում մանկահասակ երեխաների մահ, ինչպես նաեւ մանկածնության խոչընդոտներ եւ այլ ծանր հետեւանքներ:

Նկարագրված դեպքի առթիվ 28.07.2023թ. հարուցվել է քրեական գործ՝ Արցախի Հանրապետության քրեական օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով (Միջազգային ահաբեկչությունը) նախատեսված հանցագործության հատկանիշներով: Գործի մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը եւ դատավարական ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված եւ ընդհանուր բնույթի հանցագործությունների գործերով բաժինը»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 28-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 134 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԻՆԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԱԾ Է

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունն ավելի քան մեկ ամիս դադարեցված է, շինարարները չեն աշխատում, որովհետեւ երկու ամսվա աշխատավարձերը չեն ստացել: Դպրոցի շինարարությունը պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում է «Կանժինստրոյ» ընկերությունը: Դպրոցի շինարարությունում աշխատող բանվորները այս տարվա գարնանը, անձրեւային եղանակին մեծ թափով աշխատել են, իսկ հիմա, երբ կայուն արեւային եղանակ է, ավելի քան ամիս ստիպված դադարեցրել են աշխատանքը: Նրանք, որպեսզի իրենց ընտանիքների հոգսերը լուծեն, ստիպված տարբեր տեղերում աշխատանքի են անցել, որոշակի դժվարություններ են լինելու Դովեղի դպրոցի շինարարությունում նրանց նորից ընդգրկելու համար: Դովեղի դպրոցի շինարարները կրթօջախի կառուցման մեջ օգտագործած շինանյութերի համար պարտքեր ունեն Նոյեմբերյան համայնքի շինանյութերի խանութներում: Դովեղի դպրոցի շինարարության աշխղեկ, Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանը մոտ մեկ շաբաթ առաջ մեկնել է Երեւան, կառավարությունում դիմում է գրել վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ուր ներկայացրել է Դովեղի դպրոցի շինարարությունում առկա խնդիրները, Նիկոլ Փաշինյանին հիշեցրել է, որ այս տարվա ապրիլի 29-ին Տավուշի մարզ կատարած այցի շրջանակներում վարչապետն այցելել է Դովեղի դպրոցի շինհրապարակ, բանվորներին հորդորել է ետ չմնալ շինարարության ժամանակացույցից, հավաստիացրել է, որ դպրոցի շինարարության ֆինանսավորման գործում խնդիրներ չեն առաջանա: Դովեղի դպրոցի շինարարությունում գոյություն ունեցող խնդիրների մասին տեղյակ են նաեւ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, Տավուշի նախկին մարզպետ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը: Դովեղի դպրոցի շինարարության պետական ֆինանսավորման գործում խնդիրները երկուսն են՝ կատարված, նախագծով նախատեսված աշխատանքների դիմաց ֆինանսավորում չի կատարվել, մյուս խնդիրն այն է, որ դպրոցի շինարարության տարածքը ոչ թե 3-րդ կարգի, փափուկ գրանտ է, ինչպես նշված է դպրոցի շինարարության նախագծում, այլ 5-րդ կարգի, ժայռոտ գրունտ, որը քանդելու համար շինարարական տեխնիկա է աշխատել, մեծ ծավալի գործ է կատարվել, որի համար պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում: Քաղաքաշինության կոմիտեն դպրոցի հիմքի ժայռոտ գրունտում կատարված աշխատանքների մասին պետք է հայտնի կառավարություն, որպեսզի դպրոցի շինարարությունն իրականացնող ընկերությանը լրացուցիչ ֆինանսավորում կատարվի: Դովեղի դպրոցի շինարարության աշխղեկ Սերյոժա Ամիրաղյանը ակնկալում է, որ առաջիկայում դպրոցի շինարարությունում կատարված աշխատանքների դիմաց պետական բյուջեից իրենց մոտավորապես 13 միլիոն դրամի ֆինանսավորում կարվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՈՉ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Հայաստանցի մի խումբ տասնյակ գիտնականներ եւ հետազոտողներ Արցախում տիրող իրավիճակի վերաբերյալ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ ՀՀ կառավարությանն ու Նիկոլ Փաշինյանին ներկայացնելով մի շարք պահանջներ:

Հայտարարության մեջ ասված է.
«Մենք՝ ներքոստորագրյալներս, մեր անհանգստությունն ենք հայտնում Արցախում ստեղծված օրհասական վիճակի վերաբերյալ՝դիմելով ՀՀ կառավարությանը:
Ադրբեջանի կողմից ավելի քան 7 ամիս շրջափակման մեջ գտնվող Արցախի ավելի քան 120 000 քաղաքացի սովամահ է լինում: Ստեղծված իրավիճակը, Ադրբեջանի հայտարարությունները, օգտագործվող գործիքակազմը եւ քայլերը ցույց են տալիս, որ Ադրբեջանի անմարդկային, ահաբեկիչներին հատուկ քաղաքականության վերջնապատակն արցախահայության էթնիկ զտմանը հասնելն է, նրանց հազարամյակների ընթացքում անփոփոխ բնօրրանից զրկելն է:
Ակնհայտ է, որ խախտված են մարդու տարրական իրավունքները, այդ թվում՝ ազատ տեղաշարժը, առաջին անհրաժեշտության ապրանքների եւ առողջապահական ծառայությունների հասանելիությունը, կրթության հասանելիությունը եւ այլն: Նաեւ ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակը չկանխելու դեպքում ականատես ենք լինելու եւս մեկ ցեղասպանության՝ հաշվի առնելով Ադրբեջանի ահաբեկող հայտարարություններն ու ֆիզիկական բռնությունների անհերքելի փաստերը:
Համաձայն 1948 թվականին ընդունված ՄԱԿ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման եւ նրա պատժի մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի՝ ցեղասպանություն են համարվում այն գործողությունները, որոնք կատարվում են մի որեւէ ազգային, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: Այնուհետեւ հաջորդ հինգ կետերում թվարկվում են այդ գործողությունները, որոնցից յուրաքանչյուրը համարվում է ցեղասպանության ակտ: Մասնավորապես, հետեւյալ ցեղասպանական գործողությունները՝
(գ) խմբի համար այնպիսի կենսապայմանների ստեղծումը, որոնց նպատակն է այդ խմբի լիակատար կամ մասնակի ֆիզիկական ոչնչացումը,
(դ) խմբի ներսում ծննդաբերության կանխման միջոցառումները:
Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 2023 թվականի փետրվարի միջանկյալ որոշումը (վերահաստատված 2023 թվականի հուլիսին) հաստատում է Բերձորի միջանցքը մարդկանց, ապրանքների եւ տրանսպորտային միջոցների ազատ անցման համար բաց պահելու կարեւորությունը:
Սովը, հոգեւոր ու ֆիզիկական ահաբեկումը որպես բանակցային մարտավարություն օգտագործելը չպետք է հանդուրժել: Եթե ամբողջական շրջափակման ներկայիս իրավիճակը պահպանվի, Ակնայի (Աղդամի) միջոցով սննդամթերք եւ պաշարներ առաքարկելու ակտը կարելի է բնութագրել իբրեւ ահաբեկչության եւ պատանդառության սպառնալիքի տակ պարտադրանք: Ուստի, Բերձորի միջանցքն այլընտրանք չունի:
Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ մենք՝ առաջին հերթին որպես ՀՀ քաղաքացիներ, պահանջում ենք ՀՀ իշխանություններից՝ի դեմս վարչապետ Նիկոլ Փաշինյանի.
հանձն առնել իր վրա դրված հիմնական պարտավորությունը՝ցույց տալ եւ ուղղորդել ՀՀ քաղաքացիներին եւ սփյուռքի հայությանը՝ ինչպես իրենց ամենօրյա քայլերով նպաստեն ներկայիս օրհասական վիճակից դուրս գալուն,
անհապաղ մշակել եւ ներկայացնել թիրախային գործողությունների ծրագիր՝ ներգրավելով հասարակության բոլոր հիմնական շերտերը՝ կարճաժամկետ եւ երկարաժամկետ նպատակների իրականացման ճանապարհային քարտեզով,
դիմել բոլոր միջազգային կառույցներին, ներգրավել մասնագետների եւ այլ կարող ուժերի, Հայաստանից եւ Սփյուռքից՝ Արցախ տանող Բերձորի միակ ճանապարհն անհապաղ ապաշրջափակելու համար՝համաձայն ԱՄԴ վճռի,
միավորել ջանքերը՝նպաստելով Ադրբեջանի կողմից բոլոր ռազմագերիների եւ այլ կալանավորված անձանց անհապաղ եւ անվերապահ ազատմանը:

Կոչ ենք անում բոլոր գիտնականներին ու հետազոտողներին միանալ այս հայտարարությանը»:
Հայտարարությանը միանում են՝
Հռիփսիմե Մկրտչյան (ֆ.մ.գ.թ.)
Հայկ Զաքարյան (ֆ.մ.գ.թ.)
Գեսորգ Տեփանոսյան (կ.գ.թ.)
Նարինե Հայրապետյան (ասպիրանտ)
Մարիամ Մովսիսյան (գիտաշխատող-ասպիրանտ)
Հասմիկ Խաչատրյան (ք.գ.թ., դոցենտ)
Դավիթ Պիպոյան (սննդագիտ. դոկտոր (շն. Իտալիա)
Մարիամ Գեւորգյան (հետազոտող, ավագ լաբորանտ)
Նոնա Մովսիսյան (գիտաշխատող)
Սուսաննա Գագինյան (գիտաշխատող)
Գեւորգ Նազարյան (գիտաշխատող)
Գայանե Կարապետյան (ասպիրանտ)
Հասմիկ Անդրեասյան (ֆ.մ.գ.թ)
Արմեն Դանիելյան (հետազոտող)
Արփինե Հարությունյան (ք.գ.թ.)
Էլյա Սաֆարյան (հետազոտող)
Միշա Աղամալյան (ֆ.մ.գ.թ.)
Գեւորգ Շահխաթունի (գիտաշխատող)
Սուրեն Մանուկյան (պ.գ.թ., ցեղասպանագետ)
Անի Գրիգորյան (հետազոտող)
Արմինե Պետրոսյան (հետազոտող)
Սոֆյա Գեղամյան (բ.գ.դ.)
Վաչիկ Խաչատրյան(ֆ.մ.գ.թ.)
Արեգ Աշոտի Հունանյան (ֆ.մ.գ.թ.)
Քրիստինե Մարգարյան (բ.գ.թ., ավագ գիտաշխատող)
Մարգարիտա Հովհաննիսյան (կ.գ.թ.)
Կարեն Քեռյան (ֆ.մ.գ.դ)
Ռոբերտ Հակոբյան (ք.գ.թ.)
Արմեն Սարգսյան (կ.գ.թ.)
Օլիմպիա Գեղամյան (հ.գ.թ.)
Զաքարյան Մարիետա (ք.գ.թ.)
Մուշեղ Ռաֆայելյան (ֆ.մ.գ.թ.)
Մաքսիմ Սարգսյան (հետազոտող)
Սուսաննա Գեւորգյան (ասպիրանտ)
Աշոտ Աբրահամյան (տ.գ.թ.)
Ռոքսանա Զախարյան (ֆ.մ.գ.թ.)
Գայանե Ստեփանյան (հետազոտող)
Տիգրանուհի Կարապետյան (հետազոտող)
Սիրաս Հակոբյան (հետազոտող)
Տիգրանուհի Նիկողոսյան (հետազոտող)
Անի Հակոբյան (Արվեստագիտության թեկնածու, գիտաշխատող)
Արսեն Առաքելյան (կ.գ.դ.թ.)
Արփինե Փիլոյան (ֆ.մ.գ.թ.)
Միքայել Մալխասյան (պ.գ.թ., դոց.)
Արամ Բուտավյան (հետազոտող)
Նիկոլայ Ավթանդիլյան (կ.գ.թ.)
Արամ Միքայելյան (ք.գ.թ., դոց.)
Անի Հասրաթյան (ք.գ.թ., դոց.)
Աստղիկ Շահխաթունի (ք.գ.թ.)

ԲԱՔՄԱԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

ԹԱՔՑՐԵԼ ԵՆ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

ՀՀ ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության ոլորտային թիվ 8 բաժնի աշխատակիցներն օպերատիվ տեղեկություններ էին ստացել,

որ Երեւանի Անաստաս Միկոյան փողոցի հասցեներից մեկում բազմաբնակարան շենքերի կառուցապատման գործունեություն իրականացնող ՍՊ ընկերության կողմից բնակարանների գնման իրավունքների պայմանագրերում բնակարանների արժեքները ցածր նշելու, ինչպես նաեւ բնակարանները ֆիզիկական անձանց անվամբ ձեւական գրանցելու եւ հետագայում առավել բարձր արժեքներով այլ անձանց օտարելու միջոցով պայմաններ են ստեղծվում հարկման օբյեկտները թաքցնելու միջոցով առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու համար:

Իրականացվող օպերատիվ հետախուզական միջոցառումների ընթացքում ՍՊ ընկերության վաճառքի գծով փոխտնօրեն Հ.Ս.-ի հետ ենթադրյալ գնորդը ձեռք է բերել պայմանավորվածություն առ այն, որ 110 քմ մակերեսով բնակարանի գնման իրավունքի արժեքը կազմելու է 176.000 ԱՄՆ դոլար, որից 38.000 ԱՄՆ դոլարը պետք է վճարել կանխիկ եղանակով:

Նույն օրը Երեւանի նոտարական գրասենյակներից մեկի մոտ ենթադրյալ գնորդը 38.000 ԱՄՆ դոլարը կանխիկ եղանակով վճարել է բնակարանի գնման իրավունքի ձեւականորեն սեփականատիրոջը՝ Մ.Ա.-ին, որը գումարը փոխանցել է իր հետ գործարքի կատարման վայր ներկայացած Գ.Ս.-ին, որը հանդիսանում է ՍՊ ընկերության վաճառքի գծով փոխտնօրենի հայրը:

«Հսկիչ գնում» օպերատիվ հետախուզական միջոցառումն իրականացնելուց հետո մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ՍՊ ընկերության առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նախապատրաստությանն օժանդակելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով՝նոտարական գրասենյակի մոտակայքից Մ.Ա.-ն եւ Գ.Ս.-ն, իսկ ՍՊ ընկերության գրասենյակից՝ Հ.Ս.-ն օպերատիվ տարբեր խմբերի կողմից անմիջապես ձերբակալվել եւ բերվել են ՊԵԿ ՀՕՀ վարչություն:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 44 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 75-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՃՈՒՐԴ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 17 օգոստոսի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

Լոտ՝ ՀՀ, քաղաք Երեւան, Ավան, Աճառյան փողոց, 39/25 հասցեում գտնվող 72,4 ք.մ. նախագծային բնակարան (1-ին մասնաշենք, թիվ 123): Գրավի առարկա է հանդիսանում 72,4 ք.մ. մակերեսով բնակարանի գնման իրավունքի գրավը,

Լոտի մեկնարկային գինը՝ 35300000 (երեսունհինգ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ,

Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Լոտը գրավադրված է:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել են ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կողմից Ա/Ձ Արթուր Հովսեփյանին տրամադրված SØN05357 լիցենզիայի 00001,00002,00004,00006,00015,00017,00022 եւ 00026 համարի ներդիրները:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐՑԵՐԻՆ

Հայաստանում Ամերիկայի առեւտրի դպալատի AmCham բիզնես ամսագրին տված հարցազրույցում «Կոնվերս բանկ»-ի գլխավոր գործադիր տնօրեն Անդրանիկ Գրիգորյանն անդրադարձել է մի շարք կարեւոր հարցերի, այդ թվում՝ բանկային համակարգից հաճախորդների ակնկալիքներին, թվային ֆինանսական ծառայությունների զարգացմանը, ինչպես նաեւ «Կոնվերս բանկ»-ի թվային գործիքակազմին վերաբերող հարցերի: Ձեզ ենք ներկայացնում պարոն Անդրանիկ Գրիգորյանի հարցազրույցն ամբողջությամբ:

-Կառավարման ինչպիսի՞ որակներ եւ հմտություններ են նպաստել Ձեր եւ «Կոնվերս բանկ»-ի հաջողությանը:

-«Կոնվերս բանկ»-ի գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնը ստանձնեցի բավականին հետաքրքիր ժամանակահատվածում, երբ ֆինանսական համակարգը բախվում էր նոր մարտահրավերների: Միաժամանակ դա մի շրջան էր, երբ ռիսկերի զսպմանը միտված հավասարակշռված գործելաոճը պիտի զուգակցվեր ծառայությունների թվայնացմանը, նոր պրոդուկտների ու առաջարկների ներդրմանն ուղղված համարձակ քայլերով: Կարծում եմ՝ հաջողությամբ սկսել ենք այդ շրջանը, ինչի ապացույցն են թե՛ բանկի նոր առաջարկները, հիմնականում՝ թվային տիրույթում, թե՛ գրանցված արդյունքները:

-Ի՞նչ հմտությունների պետք է տիրապետել անձնական եւ աշխատանքային կյանքի միջեւ հավասարակշռությունը պահպանելու համար՝ հաշվի առնելով Ձեր պատասխանատվության լայն շրջանակը՝ որպես «Կոնվերս նանկ»-ի գլխավոր գործադիր տնօրենի:

-Ճիշտ բաշխել ու կառավարել ժամանակը, ունենալ մասնագետների, համախոհների թիմ՝ որոշումների ընդունման պատվիրակված իրավունքով: Ես թվարկեցի մի քանի գործոն, որոնց շնորհիվ աշխատանք-անձնական կյանք կոնֆլիկտ չեմ ունեցել:

-Նոր՝ թվային դարաշրջանում «Կոնվերս բանկ»-ը հայտնի է իր նորարար լուծումներով եւ հաճախորդների համար գործարկած հարմարավետ թվային հարթակներով: Կպատմե՞ք այն հիմնական թվային նախաձեռնությունների մասին, որոնցով «Կոնվերս բանկ»-ն առանձնանում է իր մրցակիցներից:

-Թվայնացումը պահանջարկ է. հաճախորդի պահանջն է տարբեր ոլորտների ընկերություններից, այդ թվում՝ բանկերից՝ ստեղծելու եւ ներդնելու թվային գործիքներ, որոնք կհեշտացնեն կյանքը, կօգնեն առանց հավելյալ ջանքերի ստանալ որակյալ ֆինանսական, բանկային ծառայություններ: Մյուս կողմից՝ որքանով շատ են օգտվում թվային գործիքներից, որքան ավելի շատ են զգում դրանց կիրառման հարմարավետությունը, այնքան մեծանում է պահանջարկը նոր թվային լուծումների նկատմամբ: Քիչ պատմական անդրադարձ անեմ. «Կոնվերս բանկ»-ը Հայաստանում առաջինն է ներդրել Մոբայլ հավելվածը, ինչը ոչ միայն նպաստեց բանկի համապատասխան իմիջի ձեւավորմանը, այլեւ պարտավորեցրեց զարգանալ, լինել մի քայլ առաջ: Այսօր մենք ծառայություններ ենք մատուցում մի քանի թվային հարթակում: Բանկի Մոբայլ հավելվածը ֆունկցիոնալ տեսանկյունից լավագույններից է եւ, բացի արդեն սովորական դարձած գործառնություններ ապահովումը, հաճախորդին հնարավորություն է տալիս վերահսկել կենսաթոշակային հաշիվը, կառավարել բաժանորդագրությունները Visa stop payment համակարգի միջոցով, գնել պարտատոմս. ի դեպ, ոչ միայն գնել, այլեւ դառնալ պարտատոմսի սեփականատեր՝ առանց բանկ այցելելու: Մեր ներդրված լուծման շնորհիվ՝ անգամ դեպոզիտար հաշիվը բացվում է հավելվածի միջոցով հայտի լրացմամբ:

Այսօր մենք աշխատում ենք այլ գործիքների, թվային լուծումների մշակման ուղղությամբ, որոնք, կարծում եմ, կգոհացնեն անգամ ամենախստապահանջ հաճախորդներին:

-Թվային դարաշրջանը բիզնեսին կորպորատիվ հաճախորդների փորձառությունը մեծացնելու լայն հնարավորություններ է ընձեռում: Ինչպե՞ս է «Կոնվերս բանկ»-ն օգտագործում այդ հնարավորությունները հաճախորդների գոհունակության եւ ներառականության մակարդակը բարձրացնելու համար:

-Բիզնես հաճախորդների համար ֆինանսների կառավարման եւ ֆինանսական գործառնությունների իրականացման հարմարավետ միջավայրի ստեղծման նպատակով մենք ներդրել ենք մի քանի թվային գործիք: Converse Business-ը ֆինանսների կառավարման հարմարավետ ու պարզ հավելված է բիզնեսի համար՝ գործառույթների պատվիրակման, ֆինանսների շարժը դիտելու, տարբեր գործարքներ կատարելու հնարավորությամբ: Իսկ ծառայությունների, առեւտրի ոլորտի կամ առաքմամբ զբաղվող ընկերություններին առաջարկում ենք նաեւ C-POS եւ C-PAY նորարար թվային լուծումները, որոնք հեշտացնում են անկանխիկ վճարումների ընդունումը:

-Ֆինտեխ եւ առցանց բանկային ծառայությունների զարգացմամբ ֆինանսական անվտանգությունն ու վստահությունը ֆինանսական կառույցների նկատմամբ դարձել են կարեւոր մտահոգություններ: Ինչպե՞ս է «Կոնվերս բանկ»-ն ապահովում իր թվային հարթակների անվտանգությունը, թվային տիրույթում ինչպե՞ս եք ձեւավորում եւ պահպանում հաճախորդների վստահությունը:

-Թվային նոր գործիքները, այո՛, հարմարավետության հետ մեկտեղ ստեղծում են նաեւ անվտանգային նոր մարտահրավերներ, որոնք լավագույն սցենարում պետք է կանխատեսել ու կանխարգելել: Թվային ծառայությունների զարգացմանը զուգահեռ՝ մենք պարբերաբար թարմացնում ենք նաեւ անվտանգությունն ապահովող գործիքակազմը: «Կոնվերս բանկ»-ում գործարքների անվտանգությունն ապահովված է միջազգային ամենաբարձր չափորոշիչներին համապատասխան: Ավելին՝ վերջերս ներդրվեց «վստահելի սարք» համակարգը, ինչի շնորհիվ հաճախորդները նույնականացվում են նաեւ թվային հարթակ մուտք գործելու սարքով, իսկ կասկածի պարագայում համակարգը արգելափակվում է:

Այնպես որ, «Կոնվերս բանկ»-ի հաճախորդների ֆինանսական միջոցներին երրորդ անձանց հասանելիության հնարավորության ռիսկը գրեթե ամբողջությամբ զսպվում է:

Մեր գործելաոճն այն է, ինչ բնորոշ է բոլոր պատասխանատու կառույցներին. հնարավոր վտանգների առաջ միայնակ չթողնել հաճախորդին, անել հնարավորը, որ բանկի հաճախորդ լինելը նրա մոտ ասոցացվի ոչ միայն բանկային գործարքներ կատարելու հնարավորության, այլ անվտանգության, վստահության եւ պաշտպանվածության հետ:

-Թվային միջավայրը շարունակում է զարգանալ. ինչպիսի՞ միտումներ եք ապագայում կանխատեսում բանկային ոլորտում, եւ ինչպիսի՞ քայլեր է ձեռնարկում «Կոնվերս բանկ»-ը նոր իրողություններին հարմարվելու ու նոր հնարավորություններն օգտագործելու համար:

-Փոխակերպումների դարաշրջանում կարեւորվում է ոչ միայն նոր ծառայությունների ներդրումը, այլեւ դրանց մատուցումը պատշաճ որակով եւ սեղմ ժամկետում: Հաճախորդը չպետք է զգա այն քայլերը, որ իրականացնում է գործարք կատարելու համար՝ սմարթֆոնի ակտիվացում, Մոբայլ հավելված մուտք եւ այլն: Նա պիտի լինի իր համար սովորական, հարմարավետ միջավայրում, որտեղ ամեն ինչ պարզ է, հասկանալի, ապահով, աննկատ ու, միաժամանակ, թափանցիկ:

Ներդնել նոր ծառայություններ՝ կանխագուշակելով հաճախորդի վաղվա ցանկությունն ու կարիքը, եւ մատուցել որակյալ, պատշաճ ծառայություններ՝ ապահովելով հաճախորդի տվյալների եւ ֆինանսական միջոցների անվտանգությունը. սա է արդի հնարավորությունների կապիտալիզացիան:

-Ելնելով Ձեր անձնական եւ մասնագիտական փորձառությունից՝ ի՞նչ խորհուրդ կտաք նոր մասնագետներին, որոնք ձգտում են էական ազդեցություն թողնել բանկային համակարգի վրա եւ անցում կատարել թվային դարաշրջանի:

-Քայլե՛ք ժամանակին համընթաց, մի՛ խուսափեք նորարարություններից, յուրաքանչյուր աշխատավայրից քաղե՛ք առավելագույնը, ստացե՛ք ավելին, քան պետք է ձեր աշխատանքային պարտականությունների կատարման համար, կրթվե՛ք, զարգացե՛ք եւ Ձեր գիտելիքը կիրառե՛ք՝ հանուն բարօրության:

-Ձեր ուղերձը AmCham համայնքին:

-AmCham-ը կառույց է, որ միավորում է ոչ միայն տարբեր ոլորտների առաջատար ընկերությունների, կառույցների, այլեւ հարթակ, որը միավորում է առաջադեմ, նորարար մտածողությամբ մարդկանց: Կարծում եմ, որ միավորելով մեր ջանքերն ու հնարավորությունները՝ կարող ենք մեծ ներդրում ունենալ մեր երկրի ապագայի կերտման հարցում:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՃԱՆԱՊԱՐՀ

ՌՈԶԱ ԼԻՆԸ՝ ԻՐ ԵՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ

Շաբաթ առավոտ է, իսկ Ռոզա Լինն իր ճանապարհին է դեպի շրջագայության հաջորդ կանգառը: «Այսօր ես աշխատում եմ»,- վճռականորեն ասում է նա: «Ճանապարհին լինելը զվարճալի էր, բանի որ ես շատ բան եմ սովորում: Ամեն երեկո ելույթ եմ ունենում, եւ սա այն է, ինչ միշտ ցանկացել եմ անել»,-գրում է Abqjournal-ը:

Ընդամենը մի քանի տարի առաջ Ռոզա Լինը լքեց իր հայրենիքը՝ Հայաստանը, եւ տեղափոխվեց Լոս Անջելես՝ իրականացնելու երաժիշտ դառնալու իր ողջ կյանքի երազանքը:

Իր նպատակասլացության հետ մեկտեղ նա կարողացավ տպավորել ճիշտ մարդկանց եւ ստանձնեց հայտնիների ազգային հյուրախաղերը բացողի դերը: Նա միացավ Էդ Շիրանին իր շրջագայության ժամանակ. դա երգչուհու կյանքում առաջին շրջագայությունն էր:

«Ես սկսել եմ մարզադաշտերից»,-հիշում է նա: «Էդը մոտեցավ ինձ իմ առաջին համերգից առաջ, որպեսզի համոզվեր, որ չեմ լարվում: Նա ինձ ասաց. «Վստա՛հ եղիր, որ չես լարվում, որովհետեւ ապացուցելու ոչինչ չունես: Դու արդեն այստեղ ես»: Նրա խոսքերն արտահայտեցին այն, ինչ ես միշտ ուզում էի լսել»:

Նա այժմ բացում է Young the Giant-ի շրջագայությունը, որի կանգառը Revel ABQ-ում է օգոստոսի 1-ին: «Ինձ համար շոուները շատ տարբեր են, - ասում է Ռոզա Լինը:- Էդ Շիրանի համար բացումը տեղի ունեցավ մարզադաշտերում, այնպես որ, ես ինձ հետ խումբ ունեի: Այս շրջագայությանը միայն ես եմ, իմ կիթառը եւ մեկ կիթառահար: Հավաքածուն մի փոքր ավելի զուսպ է, բայց լի հզոր երգերով»:

Ինչ վերաբերում է մինի ալբոմը գրելուն, Ռոզա Լինը երգերի շուրջ աշխատել է գրող, պրոդյուսեր Ռիկ Նովելսի հետ:

«Մենք հաճույք էինք ստանում միմյանց հետ աշխատելուց եւ սկսեցինք ամեն օր գրել,-ասում է նա:- Մի քանի ամիս սկսեցինք աշխատել, մի փունջ երգեր ձայնագրեցինք: Վերջին մի քանի ամիսների ընթացքում, նախքան հյուրախաղերի գնալը, ես վերջնական աչքի էի անցկացնում մինի ալբոմը»:

Թեեւ Ռոզա Լինը վաղ հասավ հաջողությունների, նրա ուղին լի էր վերելքներով եւ վայրէջքներով: «Շատ անքուն գիշերներ եմ անցկացրել, - ասում է նա:- Երեք տարի առաջ ես կարծում էի, որ դա անհնար է: Ես Հայաստանից եմ, ու նման մարդկանց հետ նման բան չի լինում: Առաջին քայլը ԱՄՆ հասնելն էր: Ես ամեն օր աշխատում էի, որպեսզի հետաքրքրեի այս ասպարեզի մարդկանց: Ի վերջո, ես բեմում եմ, ուրեմն արժեր այդպես անել»:

«Ինձ համար կարեւոր է երգել այնպիսի երգեր, որոնք ես զգում եմ,-նշում է նա:- Գրում եմ իմ փորձառության մասին, բայց փոխում եմ որոշ հղումներ: Դա երգարվեստի գոհարն է»:

Կյանքը ճանապարհին որոշակի ընտելացում է պահանջում: Ռոզա Լինը Լոս Անջելեսում ընկերների մեծ շրջանակ ունի, բայց Հայաստանի տունը կարոտում է:

«Ես բառացիորեն թողեցի իմ կյանքը եւ սկսեցի զրոյից,-պատմում է երգչուհին:- Ես այստեղ մենակ եմ եկել, եւ ինձ համար դժվար էր հեռու լինել իմ երկրից, ընտանիքից եւ ընկերներից: Այնպես որ, ես միշտ փորձում եմ կիսվել իմ պատմությամբ երաժշտության միջոցով: Իմ գրած յուրաքանչյուր երգում ես իմ մի մասնիկն եմ թողնում»:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՈՍԿԵ ՄԵԴԱԼ՝ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանի սպորտային մարմնամարզության երիտասարդական հավաքականի անդամ Համլետ Մանուկյանը ոսկե մեդալ է նվաճել Եվրոպայի պատանեկան օլիմպիական փառատոնում: Նա վաստակել է 13,666 միավոր: Փառատոնն ընթանում է Սլովենիայի Մարիբոր քաղաքում:

ՊԱՐՏՎԵՑ ԼԵՀԵՐԻՆ

Ռումինիայում անցկացվող Շախմատի Եվրոպայի մինչեւ 18 տարեկանների թիմային առաջնության 6-րդ տուրում մրցեցին առաջատարներ Հայաստանի եւ Լեհաստանի հավաքականները: 2,5:1,5 հաշվով առավելության հասան լեհ շախմատիստները: Հայաստանի հավաքականից ոչ-ոքի խաղացին Էմին Օհանյանը, Ռոբերտ Փիլիպոսյանը եւ Արսեն Դավթյանը: Պարտություն կրեց երրորդ համար Էրիկ Չաքրյանը: Լեհաստանի թիմը 10 միավորով գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Հայաստանի թիմն ունի 8 միավոր եւ երրորդն է: Երկրորդը Իսրայելի առաջին թիմն է՝ 9 միավոր: Առաջնության ավարտին մնացել է մեկ տուր: Հայաստանի թիմը կմրցի ռումինացիների հետ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏՈՒՄ

Բռնցքամարտի միջազգային ասոցիացիան (IBA) հայտնել է թիմային ձեւաչափով Global Boxing Cup եւ IBA Champions League ակումբային մրցաշարերի մեկնարկի մասին:

Մրցաշարերը կկայանան 2024 թվականին եւ կունենան խոշոր մրցանակային ֆոնդեր: Չեմպիոնների Լիգան կտեւի 10 ամիս, եզրափակիչը նախատեսված է անցկացնել նոյեմբերին: Մրցաշարին մասնակցելու իրավունք կունենան որոշակի քանակությամբ մենամարտեր անցկացրած մարզիկները: Մրցաշարերին կմասնակցեն նաեւ կանայք: Մրցաշարերին մասնակցելու հնարավորություն կունենան ակումբներ բոլոր 5 մայրցամաքներից, Չեմպիոնների Լիգան բաղկացած կլինի 32 թիմերից: Մրցաշարերի նպատակն է բարձրակարգ բռնցքամարտիկներին ավելի շատ ելույթներ ունենալու հնարավորություն տալ ու մարզաձեւը զարգացնել նաեւ ակումբային մակարդակում:

ԻՆՉՈ՞Ւ ՏԵՂԱՓՈԽՎԵՑ

Ալեքսանդր Կովալենկոն ասել է, թե ինչու է նախընտրել տեղափոխվել Սանկտ Պետերբուրգի «Զենիթ»:

«Ինձ հետ քննարկվել են «Զենիթի» եւ «Լոկոմոտիվի» տարբերակները: Մենք հասկացանք, որ «Զենիթի» հիմնական կազմում հայտնվելու հնարավորությունն ավելի մեծ է: Սա կարեւոր պատճառներից մեկն է: Ընդհանուր առմամբ, ես պատրաստ եմ մրցակցության»,- ասել է Կովալենկոն Championat-ի հետ զրույցում:

2022/2023 մրցաշրջանում Կովալենկոն «Կռիլյա Սովետովում» անցկացրել է 30 հանդիպում՝ դառնալով 2 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

Հիշեցնենք, որ հայկական արմատներ ունեցող ֆուտբոլիստը «Արարատ 73»-ի լեգենդ Ալեքսանդր Կովալենկոյի թոռն է:

ՇԱՆՐԱՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԹԻՄԻ ՄԵԴԱԼԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բուխարեստում անցկացվող ծանրամարտի Եվրոպայի մինչեւ 23 տարեկանների առաջնությունում Հայաստանի ներկայացուցիչ Ռաֆիկ Հարությունյանը երկրորդ անգամ նվաճեց չեմպիոնի կոչումը այս տարիքային խմբում: Նույն քաշային կարգում հանդես եկող Կարեն Մարգարյանը փոխչեմպիոն է:

81 կգ քաշայինների պայքարում մեծահասակների Եվրոպայի չեմպիոն Ռաֆիկ Հարությունյանը երկամարտում գրանցեց 330 կգ արդյունք: Պոկում վարժությունում գլխավերեւում պահեց 150 կգ, հրեց 180 կգ: Հարությունյանը նվաճեց այս քաշային կարգի երեք ոսկե մեդալները: Եվրոպայի Մ20 եռակի չեմպիոն Կարեն Մարգարյանը երկամարտի արծաթե մեդալը նվաճեց 323 կգ արդյունքով (145+172):

Ռումինիայի մայրաքաղաքում անցկացվող Եվրոպայի առաջնությունում Հայաստանի թիմն արդեն նվաճել է 2 ոսկե, 3 արծաթե եւ 5 բրոնզե մեդալներ: Մինչեւ 23 տարեկանների պայքարում երկամարտի ոսկե մեդալակիր է դարձել 61 կգ քաշային Գառնիկ Չոլակյանը 255 կգ (140+255) արդյունքով: Մինչեւ 20 տարեկանների պայքարում երկամարտի արծաթե մեդալակիրներ են դարձել 67 կգ քաշային Տիգրան Կարապետյանը (275 կգ, 123+152) եւ մեծահասակների Եվրոպայի չեմպիոն Գոռ Սահակյանը(311 կգ, 140+171):

Մինչեւ 20 տարեկանների պայքարում բրոնզե մեդալներ են նվաճել 61 կգ քաշային Մերուժան Եղոյանը (254 կգ, 110+144), 55 կգ քաշային Սեյրան Խուդանյանը (216 կգ, 95+121), 73 կգ քաշային Մարտին Պողոսյանը (308 կգ, 136+172), 59 կգ քաշային Ալեքսանդրա Գրիգորյանը (198 կգ, 86 +112) եւ Աբրահամ Մնացականյանը (313 կգ, 138+175):

Հայաստանի հավաքականի կազմում Բուխարեստում մրցահարթակ դուրս կգան նաեւ մինչեւ 20 տարեկանների պայքարում Սուրեն Գրիգորյանը (89 կգ), Ֆելիքս Գեւորգյանը (96 կգ), Գարիկ Կարապետյանը (102 կգ), Աշոտ Մովսիսյանը (+109 կգ), Ալինա Սուքիասյանը (71 կգ), Աննա Ամրոյանը (76 կգ), Էմմա Պողոսյանը (81 կգ), Մարգարիտա Առաքելյանը (87 կգ) եւ Ջուլիետա Ավանեսյանը (+87 կգ),

Մինչեւ 23 տարեկանների պայքարում կլինեն Գեւորգ Ղահրամանյանը (89 կգ), Արա Աղանյանը (96 կգ), Պետրոս Պետրոսյանը եւ Յաշա Մինասյանը (երկուսն էլ՝ 109 կգ), Լիանա Գյուրջյանը (87 կգ), Մերի Թումասյանը եւ Լուիզա Սահրադյանը (երկուսն էլ՝ +87 կգ):

● *Օգոստոսի 4-ին Գյումրու «Արաքս» մյուզիք հոլում տեղի կունենա Neo Van Band-ի համերգը: Տոմսերի արժեքը՝5000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԱՅՑ

ՀԱՐՑ. Ովքե՞ր եւ ե՞րբ կարող են անվճար այցելել թանգարաններ:

Սարո Եղիազարյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ գործող թանգարանների մշտական ցուցադրությունների անվճար այցելության արտոնություններ են սահմանված թանգարանային աշխատողների, պետական պաշտոնական պատվիրակությունների, մշակույթի ժառանգության բնագավառի ուսանողների, ժամկետային զինծառայողների, ՀՀ ստեղծագործական միությունների անդամների, լրագրողների (տեղեկույթ ստանալու կամ լուսաբանելու նպատակով), նախադպրոցական տարիքի երեխաների համար աշխատանքային բոլոր օրերին, (այցելուի կամ խմբի ղեկավարի կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայությունը եւ թանգարանի կողմից դրանց պահպանությունը պարտադիր է):

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սյուս բոլոր այցելուների համար թանգարաններ այցելությունն անվճար է յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը:

ԳՈՐԾԱՐՔ

ՀԱՐՑ. Հանդիսանում եմ ընկերության լիազորված անձ եւ ցանկանում եմ մտնել Team սպասարկման գրասենյակ գործարք կատարելու նպատակով: Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացնեմ:

Լաֆիկ Գյուլբենկյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լիազորված անձը պետք է ներկայացնի անձնագիր, ինչպես նաեւ լիազորագիր, որտեղ պետք է նշված լինեն լիազորված անձի կողմից կատարվող բոլոր թույլատրելի գործարքները:

Team Telecom Armenia

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիազորագիրը պետք է վավերացված լինի կնիքով եւ ստորագրությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի տարբեր բուհերի տասնյակ ուսանողներ հուլիսի 31-ին՝ վաղ առավոտից, «Ազատություն Վազգեն Խաչատրյանին» վանկարկումներով փակել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հայաստանյան գրասենյակի մուտքը:

«Մեր պահանջն է Կարմիր խաչի միջազգային կազմակերպության ղեկավարի հետ հանդիպում, Ժնեւում հրավիրեն մամուլի ասուլիս, բոլորին տեղյակ պահեն, որ իրենց անմիջական վերահսկողության տակից մարդ են գողացել, այլապես կստացվի՝ համաձայն են այն ամենի հետ, ինչ տեղի է ունեցել շաբաթ օրը»,- ասաց ակցիայի մասնակիցը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 +16 +28 +33		Արարատ	+22 +24 +38 +39	
Կոտայքի լեռներ	+12 +15 +28 +32		Արմավիր	+21 +23 +38 +39	
Կոտայքի նախալեռներ	+19 +21 +34 +36		Վայոց ձորի լեռներ	+13 +15 +28 +30	
Գեղարքունիք	+12 +16 +27 +32		Վայոց ձորի նախալեռներ	+21 +24 +37 +39	
Լոռի	+14 +17 +25 +28		Սյունիքի հովիտներ	+18 +22 +37 +39	
Տավուշ	+16 +21 +28 +31		Սյունիքի նախալեռներ	+14 +18 +28 +31	
Արագածոտնի լեռներ	+12 +15 +27 +30		ԼՂՀ	+19 +23 +35 +39	
Արագածոտնի նախալեռներ	+18 +23 +33 +38		Երեւան	+21 +23 +36 +38	

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*